Սուզուում, թանուում է անհուն երկնքով,
Եւ սըլանում է
Իմ մըռայլ ուղին հեռո՛ւ. չա՛տ հեռու...

Եւ մարդիկ, որպէս ժեռուտ, կարծր ափեր,
Իմ ուղու շուրջը չարքով կանգնած են,
Եւ մարդիկ, որպէս ամուր պատնէշներ
Իմ ուղու առաջ գոռող կանգնած են։
Բայց ես... ես օձ եմ, սեւ տուր իժ եմ ես...
Եւ գալարուում եմ, վառուում, ցասկոտում.
Դարաւոր թոյնը հոգումըս լցուած՝
Իմ ատամները նըրանց են ցըցում։
Եւ մարդիկ, որպէս խարխուլ պատնէշներ
Դա խորտակուում են, ընկնում իմ առաջ,
Ցետ-յետ են քաշուում,
Ինձ ուղի բանում, ճանապարհ տալիս,
Որ թռչիմ հեռո՛ւ, այն հեռո՛ւ ափերն,
Ուր հանգիստ տենչում է խրոխտ իմ հոգիս։

Եւ առաջ կ'երթամ, եւ եթէ նորէն
Ամբոխն ու մարդիկ իմ ուղին փակեն—
Պիտի կրծկըլիմ ես օձի նըման
Եւ ճանվախ, հըպարտ, գըլուխըս բարձրը,
Սըլաքից արաբ ես պիտի թըռնեմ,
Ամբոխի վրայով պիտի թըռնեմ ես,
Դէպ ի նրպատակս, միշտ հեռո՛ւն, հեռա՛ւն...
Եւ իմ հոգուս ժանտ թոյնովը գաժան
Ես պիտի խայթեմ եւ պիտի խոցեմ,
Ախոյեանները խոցեմ պիտի ես...

Օ՜հ, գընա՛, սլայիր, հրպարտ ու վրսեմ,
Դու իմ ի՛ժ ոգի,
Դրժընդակ ճամբովդ գալարուի՛ր առաջ,
Վեհութեան ուխտի սէ՛գ ճանապարհորդ,
Մենիկ ուղեւորդ սըլացիր հեռո՛ւ,
Դու ազատութեան ասպե՛տ-մարգարէ,
Գնա՛ հեռու, հեռու, ուր միաք չի հանուում,
Ուր մեծ ապագան լաղւարթ, աստղագարդ՝
Քեզ իրան քաշում, իրան է կանչում։

Ա. ԻՍԱՀԱԿԵԱՆՑ

ՊԱՏԳԻՆ ՄԱՒՈՐԻ ՄԸ ՅՈՒՇԱՏԵՏՐԻՆ

Շար. (*)

—o—

Գոն եղանք մենք ալ Խրիմեանին այս փոփոխութիւնին, միայն կ'ըսէ թէ լոկ ինքը պարզապէս եւ Նարպէյին չմացնենք։ Խրիմեանի մոլութիւնն է զանազան բաներ ինձմէ։ Նարպէյէ կամ Զերազէ պահել։ Նարպէյ կուգայ ու ինքն ալ իր կողմանէ բաներ կ'ընէ եւ կուզէ որ Խրիմեանի չմացնենք։ Վօյթի թերթին ինքզինքը պատրիարք անուանել տուեր է եւ առաջին պատգամաւոր. մինչ զԽրիմեան նախկին պատրիարք եւ երկրորդ պատգամաւոր։ Ճաճատ ըսեր է խմբագրին թէ սխալ է, որուն պատասխաներ է թէ Նարպէյ իրեն քարթ տուած է նոյն տիպագոներով եւ ըստ այնմ գրած է։ Կ'երեւի թէ Նարպէյ ձեռագիր քարթ տուած է. վասն զի առաջին անգամն է որ կը լսենք այս տեսակ քարթի մը գոյութիւնը. Խրիմեան սաստիկ բարկացաւ, իսկ Նարպէյ կ'ըսէ թէ ինչո՞ւ ամէն բան կ'իմացընենք Խրիմեանին։

Ի՞նչ խաղերու մէջ ենք։ Աստուած իմ։

Գիշերուան սուարէին Նարպէյը չգնաց։ միայն Զերազ գնաց ու շատ արդիւնաւոր եղ դարձաւ պատմեց Վատիկիոնի հետ ունեցած մասնաւոր տեսակցութիւնը եւ Անգղիացւոց վրայ խօսուածները, ամենքն ալ մեր քաղաքականութեան եւ ծրագրին համեմատ։

—24 Յուլիս — Նարպէյ սիվիլ հագուած եւ բրէնսութեան նշանը որ առաջ աջ կողմը կը դնէր, հիմա ձախը դրած, դուրս եկաւ։

—Զերազ Պուլէն դարձաւ. թագաժառանգին կողմանէ մեր պատգամաւորներուն լուսանը-կարները ուզեր է զորս տարաւ յանձնեց։

—Խրիմեան հարցուց թէ «Պոլիս ո՞վ վալի ընելու խորհուրդ կար։

—«Այդպիսի խորհուրդ մը չկար եւ չէր ալ կրնար ըլլալ, ըսի, զի անձի մը համար չէր գործուեր. անգամ մը միայն Նուրեան ըսաւ թէ Օտեանը վալի ընենք, ուրիշ ոչ ոք բան ըսած է։»

—«Օտեան երկրորդին եւ երրորդին կրնայ ըլլալ, ըսաւնախ. կարուկ եւ վարչական մէկը պէտք է. Օտեան բանաստեղծ, դանդաղ ու գրթասիրա է. առաջին անգամ չյարմարիր. Ս. Ա. ը աւելի կորուկ եւ վարչական անձ է, Քիւրտեբուն եւ Թուրքերուն դէմ գնելու կարող մարդ պէտք է։

«Ես չեմ գիտեր այդ մասը, եւ խորհուած ալ չէ, բայց այս գործին գլուխ կեցող անձինք ամենքն ալ յարմարութիւն ունին, Սերվիչէն, Օտեան, ՝՝՝՝, եւն.» պատասխանեցի։

—«Այո՛, Սերվիչէն ալ իշխանական մարդ է» ըսաւ։

«Նպարին համար ալ խօսք կար։»

—Այդ գերազանց բան կ'ըլլայ, ըսաւ, ի. մատուն ու գործունեայ մարդ, մէկ հատիկ է Հայաստանի համար, եգիպտոսի բարկեռոգիչը եղած է. եթէ այդ ըլլայ, շատ լաւ կ'ըլլայ ճա յապաղի», ըսաւ, եւ խօսքը գոցեցի։

Ս. ՓԱՓԱԶԵԱՆ

(Շարունակելի)

(*) Տես «Անահիտ», թ. 3 տարի, թիւ 6—7—8

digitised by A.R.A.R.@